«Յումանիլայն» ՍՊԸ գրավատների վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու մասին

2022-07-14

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/357 Ա

14.07.2022

«Յումանիլայն» ՍՊԸ գրավատների վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու մասին

Ուսումնասիրելով «Յումանիլայն» ՍՊԸ (այսուհետև՝ նաև գրավատուն) կողմից 2022 թվականի հուլիսի 11-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ գրավատների կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմաններում առաջարկվող փոփոխությունները և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի «է[1]» կետը, «Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝
Ո ր ո շ ու մ ե մ.

1. Համաձայնություն տալ «Յումանիլայն» ՍՊԸ (լիցենզիա՝ ԳԳ-Ե 238, լիցենզիա՝ ԳԳ-Ե 311 և լիցենզիա՝ ԳԳ-Ե 332) գրավատների կողմից 2022 թվականի հուլիսի 11-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ